

ԽԱՐԻԲԱԿ

ՅԵՐՈՅԵՅԱՆ
ՅՈՑԼՈՒՄՈՅՅՆ

Գիկնի է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ին. Թիֆլիս, №42.



Սուլթանը դիմերով Վիլհելմին.—
 —Հողուտ մեռնիմ, ասա էտ դազազաձ աղջկան, որ ինձանից ձեռք վերցնի. ախար նրան ինչ, թէ իմ
 տէրութեան մէջ կոնստիտուցիան թղթի վրայ կրլինի, թէ կեանքի մէջ.

POTTER
A.T. BYKOVA

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI

Տարի

ՄԱՔԱԿԱ

VI

Տարի

Երզրծաբանական-աստիքական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաշօր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ քերք բոլոր բնօճիհների համար

ԽԱՔԱՐԱԿԱՆ» շաբաթըն ծիծաղեցնում է, շաբաթըն էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիրդ ուզի:

Հասցէն՝ Тифлиς, редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան



«ԽԱՔԱՐԱԿԱՆ»

Բ Ա Ք Ա Ն Ե Գ Ի Ն Ն Է

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

Մեր թերթի բաժանորդներին «Սուրհանդակ» ամենօրեայ թերթը ուղարկում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր:



«ԽԱՔԱՐԱԿԱՆ» ՕՐԱՅՈՑԵՐ

1911 ՀՈԿՏԵՄԲԵՐ 31 օր

15

Суббота ՀԱՐԱԹ Դոյնի 3

16 (կիր.) Տօն ի Թիֆլիս, օր շաղորագրից, որք ի մէջ եկեղեցիս հայոց այսօր կարեն կեղծիլ զցանկալիս ընտրողաց. երեկոյան շարական «Ուրախ լիւր տղերք» և աղօթք «Վասն ազգաբանդութեան և զմոլլայութեան»:

17 (բ. 2.) Յիշատակ կենդանի մեռելոց հայոց, որք որպէս խլաւիւրակ կան և մնան և ով ինչ սակ. այն ասին—ոչխար էին և ոչխար մնան—եթէ էշք ոչ բտնան:

18 (դ. 2.) Այսօր Յով. Թումանեան և զԼէօ ցանկան սուտ մի երդումս ուտել, բայց ոչ կարին. դի ի մէջ՝ կոկորդի մնա և զկոկ տալ ոչ կամին:

19 (դ. 2.) Տօն սրբոցն սուտասանից, որք ի մէջ «Հորիզոնի» ընտկին:

20 (ե. 2.) Յիշատակ բարեկարգաց հայոց, զի քանդեն զինչ տեսնեն և աւերեն երբ կրւոյ կարին տալ: Այսօր ի ժամուէ ի տարածամու արեն մուտանէ և ելանէ, և որպէս քէֆն ուզէ այնպէս անէ: Տօն հարեցողաց:

21 (ուրբ.) Անուանակոչութիւն տէր Եզնիկ շարչարեայ, խաչեալ և հաստափոր քահանայի, որ վասն ազգի և եկեղեցու պաշտպանութեան երբ զբերան իւր բացէ, զայնպէս հայնոյէ. որ զԼեոն և զԹումանն զրոջ անգամ չածին:

Տոմարագէտ և օրացոյցագետ՝ Ազրոսիոս արհ-վարդապետ.

ԻՍՏՈՐԻԷՆ ՀԵՐԹ ՏԵՐՈՒՅ ԷՏՈՅ

Աստուծ խիլք տայ:

Աստուծ խիլք տայ մաշ, Աստուծ խիլք պտի տայ համ հաուց ասկին, համ դատ-դատ՝ ամեն մի հայու:

Ի՞նչի համա.

Հալեաթտա խաթրի համա չէ՝

Կարիքի համա. էս սնաթիս սվ ինչ թաւուր գուղէ ասի ու իս կի կօսիմ, վուր հաուց ասկը մէ բանի պակասութիւն ուլիթօ ունէ:

Դա խիլքի պակասութիւն է:

Աբա իստօրիէն դէվէր մտիկ արէք. էս ժուզը, կօսէ, հայերը էսինց էին ու էսինց, էս ժուզը էս գուրծիչը, կօսէ, մանէթի համա իր մամա պապու հօքին ծախում էր, կօսէ, ու էն մէկէլը կի՛ կօսէ, իր դէղի ու դիղէղի ոսկորները, կօսէ:

Մաշ:

Իստօրիէն էսինց բան է:

Ղուրթ է, միր Լէօն էլ է գրում իստօրիէք, համա իստօրիս էլ կա իստօրիս էլ:

Լէօն մէ հարիր տարուց էրով, վուր էլի սաղանայ ու իստօրիս գրէ՝ գիղիք թէ բանիր կու գրէ՝—իս գիղիմ—այ թէ ինչ. —

— «Քսանիրընը զարի սկզբին, կօսէ Լէօն,—էջմիածնում մեռան էր-կու լուսահօքի կաթղկոսներ, մէկը՝

Խրիմեան Հայրիկը, մէկէլը՝ Իգմիր-լովը: Աստուծ գրանց հօքին լուսաւորէ, մագբամ էն՝ վուր գրանք շէնորք չունէին կաթղկոսանալու, մաշ հարամ ըլի ընտրողներին՝ էջմիածնում կերած հացը, մածոնը, փլաւը ու ուրիշ-ուրիշ բանիլը:

«Իրանք՝ կաթղկոսները լաւ մարթիք էին, համա «մթնոլորդը» մուռտառ էր. կուսացկական կուրները, վուրի մէջ խառնում էր Շուշեցի Առաքել Բաբախանովը ու Լօւեցի Օխանէզ Թումանովը իրանց ուճուլ-բուճուլներով ու «համբաւաւոր» գուրծիչներով, իլլաքի Իգմիրլովի մահից ետը, խիստ անսամուսավարի, խիստ անմաքթավարի ու խիստ ասկ դաւաճան բան էր:

«Երեսպաշտութիւնն ու մատարագուրթիւնը, ջաղորագութիւնն ու օյինբագութիւնը իլլաքի «Հորիզոնի» խմբագրատանում, վուրնուր էն ժամանակը կէր, էն օրն էին հասցրի ասկին, վուր գուրթը սուտ կու կարծէր ու սուտը կի գուրթ էր հոչակում:

«Թէ ինչ ա Օրմանովը չնընդրի կաթղկոս, թէ ինչ ա էջմիածինը իրէնց ձեռին ըլի, վուր ինչ ուզին անին, ինչ ուզին քանդին. հեստի օյիններ էին անում, վուր իս նրանց տիղ հիմի էլ իմ կարմրում:

«Օխանէզ Թումանովը, մեղայ Աստու, ասաց վուր իս՝ ասկի խուզարկու իմ, շպիտն իմ, կօսէ, նրան ասին՝ մաշ խուզարկի քո հօքին, կօսէ, քո փքրիլը, քո արարքնիլը... կօսէ. նա մունջ

կեցաւ. ձեռք չէ տալի, կօտէ:

«Մէ հաջի կէր՝ Ամբարձում Առաքելով, զուրթ է լաւ մարթ չէր, համա ուժիքս նամուս ունէր՝ քանց թուէն մէկէնները:

«Կաթղկոսական խնթրի ժուգը սա վէկալաւ ու իր խարջով գնաց Ստամբոլ՝ էնդոնց էլ գուգէր գնա Հոով— փրանգներու աշխարհը:

«Ստամբոլ գնաց թէ՛ չէ էնչախնէթ էնդի խօլվերա նընգաւ. խօլվերա նընգաւ ու ինչ թաւուր խօլվերա, կօտիս գագրանիցի ապրանք. մարթիք, իլլաքի օսմանլիք՝ ճանճերի թաւուր կոտրուում էին:

«Մա՛շ:

«Մէ թաղում էլ պաժար ընգան. խիլիմ տներ էրւեցան:

«էտ խօլվերի ժուգը «տարաբախտաբար», վունց հաուց պատրիարքարանում, վունց ասկի ժողովում մէ մարթ չիչացաւ:

«Իփ վուր ուզեցաւ խօլվերիցը իմանայ միգէզը՝ թէ ինչեմէն է, վուր ինքը՝ Առաքելովը կի Ստամբոլում խօլվերի խարջ էլաւ ու էնդանցի ասկի «գուրճիչները» կի չեյան, վունչ մէկը չընգաւ— խօլվերէն շուղաք էրիս:

— «Դուն վունց վուր զոնաղ մարթ քիզ թաւազա էկանք, կօտէ, համա էստի մինձ հայերու թաղերում ու իլլաքի հայ ասկի գուրճիչների մօդերը՝ չինք մանում, կօտէ, չունքի ջէր հարց է, դրանք մարթու ջիլագ ունին թէ ինսանի (անասնի) կօտէ, մինք ափսուս ինք, կօտէ, վուր հայերու գուրճերով ու էն էլ ասկային գուրճիչներու գուրճերով բանդ ըլինք, կօտէ:

«Առաքելովը Ստամբոլում իմացաւ, վուր թիֆլիզեմէն Առաքիլ Բաբախանովը, (խնդրիմ էս Առաքիլ Բաբախանովին, վուրին Լէօ էլ կանչում էին— ինձ հիդ չխառնէք)— Օխանէզ Թումանովը ու էլի մէ էրկու տիրացու, մեռիլ լւացողնի՛ր՝ վիր ին կալի ու մէ ցուցակ ին զրգի Ստամբոլի պատրիարքի պոմոշնիկ մէ էպիսկոպոզին, վուր էն չախը կէր՝ Մանկունի անումով, ու նա էլ լաւ պտուղ էր այ, լաւ քերթում էր իդ ունեցողներին, կօտէ,— թէ վիկալէք ու էս ցուցակում գրած «պատուաւոր» ասկայիններուն, մեղայ Աստու, «համբաւաւոր» զոչերուն օսմանլի հողի թեմերից ձէն սուէք, կօտէ, վուր կաթղկոսական նընգրութիին գան ու ասկի համա մէ հեստի կաթղկոս շոգին, կօտէ, վուր պամպուլա ըլի մեր ձեռքին, կօտէ:

«Ինչ խօսք վուր էս բանը անսովէստ բան էր. համա ինչ կօնիս, վուր Առաքիլ Բաբախանովը ու Օխանէզ Թումանովը միթոմ վունչինչ, իսկի չէին էլ ամանչում:

«էս բանը վուր իմացաւ հաջի Համբարցումը, խիստ քեղամագ էլաւ, վիկացաւ ու գնաց Իտալիա. գնալու բաշտան թրքերն ու իտալիքը կուեցան. ասում էին էսոր մեղը Հաջունն է:

Թիֆլիսում, էդ ժուգը Գասպար Կալատուզով սնունով մէկը կէր, ինքը թաւանկար ասկի վուրթի, հէրը հայ, մէրն էլ հայ աղչիկ, հաուց ասկի համա գուրճը յիդ դրած ունէր. ժամ ու պատարագ հեստի գիւգէր, վուր օխտը վարթապիտի ու մէ դուժին էպիսկոպոզներին ջէքը կուգնէր հալալ պաս պահող, շաբաթը մէ ջէր բաղնիս գնացող, կիրակի օրօքը ջէնի աղչկերանց հետ չխօսող՝ Տիգրան Նազարովի հանգի ու ասլան էր ասլան. ստախօսին գործու մէշօկում կու թաթխէր, դորթ ասողին էլ ալրի մէշօկում կու նըստեցնէր:

«Մա՛շ:

«էս Գասպարն էլ ասում էր իրաօղչում ախպէր Բուղդան էրիցովի հիդ՝ համ «Պաթաբալ»-ում, համ «Սուրհանդակում»— Հորիզոնականները՝ դալբուլին շատ էք անում, կօտէ:

«Համա ինչը կօտկէր.

«Սկին սապոն

«Ուկին խրատ:

«Բաբախանով Առաքիլը, (վուր աւելորթ անումը տարաբախտաբար իմ անումի հանգի Լէօ էր. խնթրում իմ. իմ ու նրա՛ էդ ազգ խաղցնող Լէօի հիդ չխառնէք գէթաղալ) ու Օխանէզ Թումանովը հեստի օյիններ աւրեցին, հեստի մալաղներ խաղցրին ասկի գլխին, վուր էլ ինչ ասինք:

«Տօ, դրանցմէն առաջինը մօնթուլթեհից տէլէգրաֆի չինովիկութիին էր հասի. էնչադն էլ. Աստուձ հոքին լուսաւորի Արծրունովի, մէ-մէ ջէր գագէթումը վուր գրիլ չէր տէ, հեստի էր տրաբախացի, հեստի՛ վուր կօտիս օխտը ունիփստատ մէտի էր աւարտի: էս էլ վունչինչ. Օխանէզն էլ աղաք կոնցտիստոբում գրագիր է էլի, համա չունքի լալ-լաւ խաղիր է մոգոնի ու նրան էրէս էին տւի, սա աստուձն էլ էր ուզի, ու կարծել էր թէ ժամազրքիրը ինքն է կուլ տւի. մէ պուրի իրէնց «ազատամիտ» էին կանչում ու ուրիշներուն կի՛ վուր ուսում ու գիտութիին մէշօկներով, ջլալներով էին բերի տուն ածի, նրանց «պահպանողական» անում էին գրի:

«Աշխրքի քոուլթին:

«Սրանց խիլքով պաշտարանները նրանք էին վուր ասում թէ ժամը, էրեղեցին պէտք է րէֆօրմա ըլի կօտէ:

«Ինչ էր րէֆօրմա:

«Րէֆօրման պաշինկա ասիլ էր:

«Առանց պաշինկի աշխրքիս վրէն բան կուլի:

«Չէ. չի ըլի, չունքի առանց պաշինկա ձեր դուշմանն էլ չմնայ:

«էտինց. րէֆօրմէն պաշինկա էր:

«Ասկի մէջ խալի կէր. ուսումով, նամուսով, աբուսով մարթիք, վուր ասում էին թէ հայ ժամն ու պատարաքը պաշինկա անելու է, կօտէ:

«Ղորթ էլ էր. էչմիածնը քանդուում էր, մէջը բայդուշներ, դամուրէք, դուրսը խլեգներ— ջոջոնէր... մի հինգ տարի, էլ վուր էտինց մնար՝ կու բաթմիշ ըլէր. սրանք՝ ասում էին թէ՛ կաթղկոս, ան տէրտէր, թէ վարդապետ ու էպիսկոպոս չունքի կան, կօտէ, մաշ լալիրը ըլին ու ուսումնականներ, կօտէ:

«էնչախալ Լէօն ու Օխանէզ Թումանովը (խնթրիմ ինձ էն Լէօի հիդ չխառնէք). իրէնց՝ համափսոն-մամփսոններով վունչ թէ էդ բանին դաբուլ չէին, չէին էլ ուզում ուսումնականի անումը լալ. մօնթ էլիլ ինք, մօնթ էլ պտինք մնայ, կօտէ. ժամը թէկի քանդուում է, թող քանդուի, կօտէ, համա քանի մինք կանք կօտէ, առաչադիմականներ ենք, կօտէ, մէ վիվէսկա էլ կպցրել էին— վրէն գրած էր НОВЫЙ МОДНЫЙ ТОВАРЪ, էս ապրանքն էլ ինչ ապրանք էր. հին շորեր ծախող նախիչեանցի խաչաղոզներ վուր կան, էն վուր տնէ տուն ման ին գալիս, կոպուլուններ ին առնում, իժում սաժան վաքս ին քսում ու ծախում. էտինց ապրանքին նուլի ու մօղնի ապրանքներ էին ասում:

«Պաշտարաններում էր իս ու իմ հոքին. էլի խնթրում իմ ինձ՝ էս Լէօյի էն Լէօյի հետ չխառնէք. իս ու փրօ մաքուր ու իստակ մարթ իմ»...

Լէօ

(էլի կուլի)

Արտագրեց ու փեշախի տեղ

Պամթաբալա աննուայնի համց

Գասպար աղա Կալատուզով



ՅԵՐԱՅԵՅԱՆ
ՅՈՅՆՈՒՄՈՅՅՆ



—Դու իմն ես, ես ըմբ, եւ ո՞վ կարող է ինձ քեզանից ըստանել. նայաթ չար սատանին. Իտալիան ի՞նչ է որ... ըտանս մէջ կրճզմեմ.
—Օ, ես քեզ սիրում եմ.

ԲԺՇԿԻ ԱՌԱՆՁՆԱՍԵՆԵԱԿՈՒՄ



Ամուսինը դրսից.—Բժիշկ ջան, կարելի է ես էլ ներս գամ կնոջս հիւանդութեան մասին իմանամ: Բ—Քա.
Բժիշկը.—Ինձ թուում է, որ անյարմար է:
Կինը.—Անյարմար է... անյարմար է... դեռ մի քիչ էլ սպասիր դուրսը—ինչ ես շտապում:

ԵՍ ԱՍՈՒՄ ԵՄ

— Ինքնակոչ դերասաններից ազատելու համար, հարկաւոր է հետեւեալ սակագիրն առաջարկել լայնատարած Կովկասի բոլոր խաչակեր ու կիրկաչակեր մազաբաններին, մարդու երես վեր ընրող սափրիչներին և մկրատով «կէկ-վօկ» ածող վարսավիճիչներին — պարտաւորացնելով ի նկատի առնել ամենավերջին երկու յօդաւճաները. —

- 1) Եքա մարդի գլուխն արածելը (այսինքն խուզելը . . . 20 կ.
- 2) Դէմքը ամբողջովին սափրելը, էլի 20 կ.
- 3) Դէմքը սափրելով կզակին մի փոքրիկ էծի միտուք թողնելը . . . 15 կ.
- 4) Փափիկ սեռի վարսերը այլ և այլ ձևերով սանրելը.

ըստ փոխադարձ համաձայնութեան, կամ մի համբոյր, հանդերձ կըամիտներով. (այս անպիտան վարսաբաններ ձեզ էլ ենք ճանաչում՝ թէ ինչ պտուղներ էք...)

- 5) Սևերեսներին սպիտակեցնելը, հանդերձ կեղծ խալերով. 50 կ.
- 6) Շուն խուզելը) . . . 1 ը. —
- 7) Մաթօնի զէմքի աղւամագերը օղակապ թելով քաղիլը 1 ը. 50 կ.
- 8) Բեխներ սափրելը առանց այլ և այլութեան . . . 2 ը. —

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Վ Ե Ր Փ Ե Գ Ե Տ Ի Ց Ի Ն Ե Կ Ե Լ Ե Լ Ե Լ Ե Տ Ի Ն Ց

(Շարունակութիւն)

Նոյեմբերի 10

Ջարմանալի բան. գիւղացի կոս հոգաբարձուներն էլ մեզնից վկայական են պահանջում: Թող պահանջեն. բարով ստանան: Դրանց մէջ անհրաժեշտ է սև կատու անցկացնել, եթէ ոչ խայտառակութիւնն անխուսափելի է: Մարդօն լաւ է տանում իր գործը քան ես: Ախր գուր չի սուսած, էժը էծի համար լաւ է, քան մի սուրու ոչխարը: Գիւղի բոլոր կանայք նրան յարգում են, որովհետև նա նրանց լեզուն հասկանում է, ուղիղն ասած նա էլ այն մակերևոյթի վերայ է գտնուում, որ մակերևոյթի վրայ՝ գիւղի կանայք: Ուստի բնական է, որ պիտի սիրեն նրան:

Նոյեմբերի 13

Ուղղակի ես լրագրութեան նիւթ պիտի դարձնեմ մեր աղա Կ. գաբարձուներից մէկի ապօրինի վարմունքը: Նա թոյլ է տալիս իրեն քիթը խոթել մանկավարժական խընդիրների մէջ: Անցնալ օրը կենդանաբանութեան դասին, մեղուների մասին պատմելիս, ես բացատրում էի երեխաներին, որ

9) Золингенъ-ի ածելիների գինը—Prix—fix . . . 25 ը.ց'100ր.

* * *

—Նորաւարտ պատանի ուսուցիչները որոնց խիստ դժար է յաջողուում, առանց որևէ վարժուհու ընկերակցութեան գիւղերում պաշտօն գտնելը—Թող շտապեն գիւմել.

Berlin no. 18. Elisabethatrasse 66

Интернациональное посредничество для устройства браковъ—Леопольда Шле-зингера.

Նրանք կուղարկեն ըստ ճաշակի գրգի հարսիկներ Բագաջով:

* * *

—Ով տանջուում է անքնութիւնից թող մէջքի վրայ պառկէ և ձեռքն առնէ «Բարի լուր» վերատուրթեամբ աւետարանական թերթը և դեռ չկարդացած կնքէ:

* * *

—Դիւրահաւատ ու դիւրահաւան օրիորդները, որ նախ ցնծում են և ապա ցնցում, տղամարդու հետ նոր ծանօթանալիս, պիտի աչքի առաջ ունենան հետեւեալ խօսքերը—

Նրանք կնճիթով են խայթում, իսկ նա աշակերտների մօտ պնդեց, որ մեղուները պոչի մօտ խայթոց ունեն, այդ խայթոցով են կծում: Ապուշ, միթէ աշխարհում կայ մի կենդանի որ պոչով կծի: Դէ արի այդպիսի աւանակներին լրագրութեան մէջ մի լւանայ: Յետոյ ես պնդում եմ, որ առանց գետի հովիտ չի կարող լինել, իսկ այդ փիլիպոսը հաստատում է, որ հովիտը առանց գետի էլ կարող է լինել: Անմիջապէս այդ լրագրութեան նիւթ կըդարձնեմ:

Նոյեմբերի 15

Ես իմ խաչը համբերութեամբ պիտի տանեմ: Բոլոր յառաջադէմ մարդիկ միշտ հալածուում են: Գիտութիւնը թղթի կտորով են ուզում գնահատել: Միթէ գիւլումը աւանակին փիլիսոփայ կըդարձնի: Ի՞նչ ուզում է լինի պիտի դիմանամ: Մեր ոռճիկը համարեա ամբողջովին պիտի մնայ: Միտէմս յաջող է: Երեխաները իրար նայելով բերում են ամեն ինչ:

Փետրւարի 10

Հոգաբարձուները յոգնեցին վկայական պահանջելուց: Էլ ձայն չեն հանում. ուղիղ խոստովանած, այդ իմ քաղաքականութեան հետեւանքն է: Մարդօս նրա հետ կեղծ սիլի-բիլի է սկսել, իսկ այն բարազամի հայվանն էլ բերնից լրճոււնք թափելով այժմ սկսել է պոչը շարժել: Դեռ շատ պոչը կը-

որոնք մեծ նիցշէն Կարմիր Միջնելով ալակերպել է ըստ իր փիլիսոփայութեան— «Միբիր թշնամուդ, թոյլ տուր կողոպտէ քեզ աւագակը... Կինը լսում է և կատարում է»:

* * *

—Գեղեցկուհի տիկնանց այժապող (portայի) ամուսինները տանջող կասկածներից զերծ մնալու համար, պարտաւոր են ձեռք բերել մի գոյգ ուտինէ շրթնակալներ: Մէկը՝ յոյժ անհրաժեշտ է ունենալ, իսկ միւսը՝ նայած այր-ամուսնու աշխարհահայեացքին կարելի է և գործ չածել:

* * *

—Տրիպոլիտանիայի չարագուշակ պատերազմի շնորհիւ արքայական նարինջի, ինչպէս նաև լայնակուրծք այր-մարդկութեան արտահանութիւնը խիստ կընւազէ. այդ պատճառով կրակի մուշա Մառա-նիքը չպիտի այլևս պահեստի նարինջները էշերի կերակուր դարձնեն և ոչ իրանց Ծառ-նիերի էշին նստացնեն:

* * *

—«Սողոմոն»-ով բժշկութիւն անելը, չբեր կանանց գաւակ պարգևելը, բերողներին արգելելը, մանչի տեղ աղջիկ և աղջշարժի... Եթէ նա աղէս է, իսկ ես էլ պոչն եմ...

Փետրւարի 19

Ասուած իմ, երբ պիտի ազատեմ այս գիւղից: Ուղղակի այստեղ վայրենանալ կարելի է: Դեռ մեղադրում էլ են, որ ինչու ուսուցիչները խոյս են տալիս գիւղերից: Յօղածս էլ չտպւեց: Չլինի հոգաբարձուի ասածները ճիշտ են: Անպատճառ մեղու պիտի գտնել և փորձել:

Փետրւարի 25

Իսկապէս շատ անզգոյշ քայլ արի: Քալօ ապերը կարծեց, որ մեղանոցից մեղր գողանալու եմ եկել: Այդպիսի բան միայն արջերը կարող են անել: Վաղը ես դասարան մտնել չեմ կարող. Անիծեալ մեղուները այնքան կծոտեցին, որ գլուխս դղումի չափ է դարձել: Եւ ես այսուհետև երբէք մեղուների մասին չեմ սխալելի: Իսկապէս այդ անզգամները պոչով են կծելիս եղել: Չգիտէի, որ նրանք երկու բերան ունեն: Իսկ եթէ ամեն բան սովորելու համար այսպիսի դառն փորձերի պիտի ենթարկես, լաւ է տղէս գիւղացի մնալ:

Փետրւարի 26

Գլուխս աւելի է մեծանում: Երկու օր է սենեակից դուրս չեմ գալիս: Միթէ ուու-

ՀԱՅԿԵՆԻ
ԳՐԱԳՈՐԾՈՅՑ



Ժխական ժողովի արձանագրութիւն.—

Ծխական ժողովը ընտրեց պատւիրակ մեծ. պարոն այսինչ ...եանցին և պարտաւորեց մանգանտով իր քւէն տալ այն պատգամաւորին, որ մեր սրտի թարգմանը կըլինի:

(Ս. Ժխական ժողովը 4—5—6 մարդուց է բաղկացած (ինու՛մ):

Թ Ա Յ Փ Ա Յ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ

Ն Ի Է Ր Կ Ո Վ Կ Ա Ս Ի Հ Ա Յ Ո Ց ...Չ Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



—Պարոններ, պարոններ, պարոններ... գործ, գործ եւ ոչ թէ անոններ—անոններ եւ Թայֆայական միտումով շահեր..

—Սա ձեզ ասում եմ ինձ լսեցէք, չի կարելի ե՛ք ինքնուրուի տարիներով փող ուզել, փող հաւաքել, ընկերութիւն կազմել եւ ոչինչ չընել:

Մեծ մտքերը սրտից են բղխում:

Վովնարգ

Պեղծի մարդը սիրում է ոչ թէ նրա համար՝ որ դա նրա համար ձեռնառու է, այլ նրա համար՝ որ նա հենց սիրոյ մէջ է բախտաւորութիւն գտնում:

Պասկալ

— Ի՞նչ հեշտ է յաջողում ասելութիւնը, ի՞նչ դժուար՝ սէրը, իսկական սէրը:

Մարիա Կորէլլի

Քարգմ. Գ. Բաբուրեան

ԺԱՂՈՎՐԻՆԸՆ ԹԵՏՐՈՆ

Չորեքշաբթի հոկտեմբերի 12-ին, Հայոց Իրամատիկական Ընկերութեան թատերասանների խումբը մասնակցութեամբ դերասանների ներկայացրեց «Չարադուշակ քայլ» դրամա 3 գործ. հեղ. Կարէէի և «Միւրաբիզ» վոգ. 1 գործ. հեղ. Արաքսեանի:

Իրամայի մէջ ցոյց է տրւած, որ տղամարդը դաւաճանում է կնոջը՝ սիրելով մի ուրիշին, իսկ վոգեկի մէջ ընդհակառակը կինը դաւաճանում է տղամարդուն, վարտիքի ծայրերը 10 սանտիմետրի տեղ կըտրելով 30 սանտիմետր: Այնպէս որ հանդիսականներից ոչ ոք չհնդացաւ. երկու սեռն էլ համաշափ վարձատրւած էր:

Պէտք է իբրև խոստովանք ասել, որ երկու պիէսուսն էլ խաղը շատ սառն անցաւ, թէև շատերը բացատրում էին, որ սառնութիւնը առաջ է եկել պիէսների տաքութիւնից, բայց իմ կարծիքով և ֆիզիքայի օրէնքով, սառնութեան պատճառը պէտք է լինի ձմեռւայ ցուրտը... Այնպէս որ վոգեկիլը ոչ մի ծիծաղ չպատճառեց, եթէ չհաշտւեալ ան մօմենտը, երբ, չգիտեմ պատահաբար թէ վոգեկին էր պահանջում, որ կատուն բնմի վրայով մի սենեակից դէպի միւսը փախաւ. թէև այդտեղ մենք չծիծաղեցինք, բայց ողորմի Դուշինանի հօրը ճանապարհին մեզ մի կուշտ ծիծաղեցրեց:

Ինչպէս երևում է տանցավալի վեշերները որոշ նշանակութիւն են ունեցել, որովհետև դարոցների աշակերտ-աշակերտուհիները գալէրէից համաշափ ծափ էին տալիս և կրորդ անգամ բնմ հրաւիրում տիկ. վիրթինէին, թէև սա ծափահարողների մաստակը ցեխում թողնելով, գոյս չեկաւ և ցոյց տուց, որ միւս անգամ իրենց անհանգիստ ծափերով հասարակութեան զահլան չտաննու:

Հա, մոռացայ ասել, որ տիկ. վիրթինէն իրենց տանից մի ծաղկէփունջ նւէր ստացաւ:

Փարեմուգ




Ն Ը Մ Ը Կ Ղ Ը Ր Ս Ի Ց

Գասպար Աղա ջան.

Սեպտեմբերի 26-ին ետրաններու հետ թիլֆիսի վեճ ուլիցներին մէջ գեազմիչ գլէինք կը: Սալթ հս չէի. ձեր քաղքից ալ շատ շինիկ կար: Թագ թագ, ջուխտ ջուխտ, սուրու սուրու, էգ ու վորց, տղայ ու աղ-ջիկ: Վերը կալի չափ շեափայ է դրեր, սաղ ուլիցը դաւթիւ է, վերը մէ սէլի թագը է դրիւ, վրան լիքը խոտ ու դարման. վերը մէ քրթի քօլոզ է անցրեր գլխը, վրան մեշոքներով ալւան ալւան ծաղիկներ. վերը մէ հաղողի քթոց է տնկիւր թափին, վերը մէ լակլակի բուն է դրեր, վերը մէ բոշի սալայ, վերը մէ շաքեարի բոշկայ, վերը մէ մօլլի չալմայ շերիդ մերիդով կապած... Հարնայիսա հազար չեշիտ կնիկ ու աղջիկ, հազար չեշիտ ալ նոր մօզնի շեափաներ: Եարար էս տուն քանդող մօզան տէյսօր էրը պիտի մեր տունը քանդէ, մեր փարաները ուտէ: Սէֆէլ էրիկ մարդիկ, գլխներդ քարին տէք, քարը գլխներուդ տէք. գիշեր ու զօր վաղէք, քրտնէք, պաղէք, փարայ վաստկէք... Թող ձեր կնիկները շալար հագնին. 25 մանէթանոց շեափայ դնին, ուտին խմին, մթնի քնին, համ էլ. մեղմ թեղ Ասուած... Թող մնայ...

Սիրտս չայ ուղեց: Գնացի «Իւժնի կաթնատուն» խանութը՝ ժամին քով: Ալլայիչուն ըսինք. ազտեղ դալայիլու բան չգտայ: Ստօլները, ծածկոցները, ստաքանները, գդալները, պօլը, պատերը, նօքեարները, աղաները, խազէինները, մուշտարիները... բիթուն բիթուն դայտայ դանոնի մէջ թամուզ դալայած էին: Ինձի երկու ստաքան գցովի չայ տւին, երկու շահի առան: Չիմացան թէ ես Դալայի Մարգարն եմ, թէ չէ, բաղիհալայ չայ կուտային. դոնաղ կէնէին: — Թիլֆիսից յիւանք էկանք Գիւմրայ վակզալը: Մարախտան կանուխ սիրտս խաշ յուզեց: Հարցնելով գտայ խաշ ծախողի խանութը: Ամանմ խաշ տւին. ինչ խաշ, գպլուտիկ ջուր. մէջը քանիմ օսկոռ. Խաշի չանաղն էլ մրի աղտի մէջ կորեր էր: Ատոնց աղամանը, գտալները, դանակը, ստղը, խաշի պղինձը, իլաքիմ խաշ ծախող հարիֆը անքան մբօտ էր, անքան ժանգոտ էր, գիտես թէ յէստուն տարի դալայի յերես չեն տեսի: Անօթի էի, չարասզ չարահատեալ համ կերայ, համ օրշնեցի էփողին: Խաշից յետև չայ յուզեցի. ինչ չայ. պասմի ջուր, իլաքիմ ստաքանն ու թաքաղը, բունօթու գտալը, ճանճոտ շաքարը: Չայր խմելու բան չէր, փարսն տւի ու դուս յէլայ: Մէ սուս ալ էկաւ ատտեղ չայ խմելու. հմը ստաքանները չայի ճանկը տեսաւ, բաշայից «սուգին սին, պաղից, մերգաւեց» խօսքեր ըսել. բաշայիցին կոխը. ես հեռացայ: Հմը պլայիչուն ըսէնք, ստոնց չայը շատ էփան էր: Ատոնք մէ պար չայը մէ շահում կուտան. մէ պարը կծովի օր խմիս յէստուն ստաքան գլլի: Մէ շահու յէստուն ստաքան

չայ, թիլֆիս մէ շահու մէ ստաքան չայ: Պասմի ջուր գուզէք, Գիւմրի խմէք չայ, թէ իսկ չայ գուզէք. «Ինչպէ՞ր կարծիքներդ գնացէք»:



Փողովում.

Նախագ.— Լսէք մի բան հարցնեմ.— ով է աշխարհում բոլորից դժբախտ:
Ժողովակ.— Չգիտեմ:
Նախագ.— Գո՞ճին:
Փողովակ.— Ինչո՞ւ:
Նախագ.— Թրովեմեմ նա մի մայր ունի, ևն էլ խոզ է:

Փողոցում.

— Պարոն, ողորմեցէք խուլ ու համբին:
— Դու ինչպիսի խուլ ու համբ ես, որ խօսում ես:
— Պարոն, իմ ընկեր խուլ ու համբ գնացել է նախաճաշելու և ինձ խնդրել է իր փոխարէն ողորմութիւն փողովիմ:
Սրբեալ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիւլավոզակից վերադառնաւ և սկսեց հիւանդների ընդունելութիւնը Բերլինի համալսարանի ԲՈՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՂՐԱՔԵԱՆՑ

ներքին հիւանդութիւնների՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՆՏ և ՍՐՏԻ հիւանդութիւնների:
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւ. ժամը 9—11 և երեկ. 5—6 ժամը:
Католическая ул. д. № 10.
100—4

Հիւանդանոցում.

— Ներեցէք, օրիորդ, բանի տարեկան էր:
— Դա ձեր գործը չէ...
— Ես կըրբեմ 44 տարեկան:
— Ի՞նչ, ցնորել էք, դեռ 38 տարեկան չկամ:
Սրբեալ



Կ Ա Ն Ա Ն Ց

ՊՐՈՓԵՍՈՐ ՍՈՍՆԱԼՆԻ ՆՈՐ ԴՊՐՈՑ


„Ի Դ Ե Ա Լ“

Կար ու ձևի և ամեն տեսակ գեղեցիկ ձեռագործների ԱՇԱԿԵՐՏՈՒՂԻՆԵՐԻ ընդունելութեան պայմանները շատ նպաստաւոր են բոլոր դասակարգերի համար

ՉԲՆԻՈՐՆԵՐԻՆ ՉՐԻ

Պարագմոնները սկսելու են օգոստոսի 27-ից. հասցէն՝ УГОЛЬ Елизаветинский и Реутовский. 10—9





Նրկաթուղու գնացրում

—Այստեղ չի կարելի ծխել:
—Ես չեմ ծխում:
—Ինչպէս չես ծխում, երբ ծխախոտը բերանումդ է:
—Շատ էլ ծխախոտը բերնումս է, կարծում էք թէ ծխում եմ, այնպէս էլ կօշիկներս որ հագիս՝ է ման եմ գալիս:

Սեփեւ

МАГАЗИНЪ КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіа пассаж.№ 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ ШВЕДСКАГО КОМПОЗИЦІОН. ОБЪЕМА Носится не менѣе двухъ лѣтъ Постоянный большоіа выборъ свѣжаго товара ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ



По фабричнымъ цѣнамъ Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, как-то пуговицы, подкладки, мѣль и прочее. ИНЪЕТТА ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ

Остерегайтесь поддѣлокъ и подражаній

Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8

15—6 (с. ш.) М. А. КАЛТАКЯНЪ

Դատարանում.

Դատար. — Իւր մէկ անգամ գնացել էք այն խաչուձը կողպատել և մէկ էլ երկրորդ անգամ էք գնացել:

Մեղադրեալ. — Այո, պարոն դատար:

Դատար. — Ինչո՞ւ:

Մեղադրեալ. — Որովհետեւ դաճը գրած էր, որ «ինդրում ենք էլի դար այտուկ»:

Սեփեւ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. Բ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ

ՇԻՐԻՆԱՆՅ

ՆԱՇԽՈՒՆԸ

250 երեսանոց վէպը: Հատով արժէ 80 կոպէկ, գումարով գնողներին 25% զիջում: Ապառիկ, պահանջ բացառութեան, ոչ ոքի չի ուղարկելի: Գրավածաւանները ևս պէտք է զիմեն կանխիկ դրամով: Պահեստն ինձ մօտ է: Հասցէս. — Թիֆլիս, Կանդովսկայա ցերկով. Սուրբ. Ար. Դճուրյանց. 595 (կ. ու. ե.) 10—7

== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառոււմ է ==

Ն Ա Բ-Ի Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

Գ-ի 66 է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, ուր և գիմում են գումարով գնողները:

10—3



Первокл. ресторанъ „АННОНА“



„Здание Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко

Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвицъ — г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биліарды. Имѣются кабинеты, отъ жары можно спастись только въ

„АННОНА“

52—25

Բ Է Ս Տ Ո Ր Ա Ն - Ճ Ա Շ Ա Ր Ա Ն „ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կարինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—25



1. Կանսրվատորիայի աշակերտ,

2. աշակերտուհի,

3. երգչուհի,

4. ապագայ դաշնակահար,

5. պրոֆեսոր մուզիկի,

6. դժբախտ արուսիկ,

7. անսեղ հարեանք:

Ո՛վ բասականութիւն է ստանում՝ եւ ո՛վ տանջանք ու հիւանդութիւն